

ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՆԿ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ԱՄԼՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Rev. Père G. Kalemkarian Michitaris
de ngasse № 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիսիոյ համար Տարեկան 12 փր.
» Վեցամսեայ 6 փր.
Առատանմանի համար (հոկտ. քիւր մէկ
համարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փր.
Անտիպոյի » 2.60 տղ վեցամս 1.50
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԵՐ

Համակ դրամ հետյիս զրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱՎՈՒՆԿԻՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» Լ. ՄԱՐՈՅ. Վ. Ս. Ս. Ս. (Պաշտօնագիր)
Редация на Вѣстникъ
„Іравункъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„Iravounk“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեամբ ուղղեալ գրութիւնք
էս չեն զրկուիր եւ յարմար դասուած-
եանք միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Մանուցիւն տղը 20 սանթիմ. երե-
կին աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը շինի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԾԻՔՆԵՐ

19-րդ դարու է՛ն վերջին տա-
րիները ազգատեղի եղան մարդ-
կութեան, պէգալի ու տխուր ան-
ցեալ մը թողուցին. ապագայ քե-
րունդը պիտի կարգայ պատմական
անլուր խեղճութիւններու շարք
մը:

Հայոց անօրինակ ու զարհուրե-
լի խորհրուծն յաջորդեց թիւրքո-
ղեկն պատերազմը: Գուպարի եր-
կամեայ պատերազմը տեղի տուաւ
Սթանօ-Ամերիկեան պատերազմին.
չառ չանցաւ, ծագեցաւ Անկլո-
Պոն պատերազմը, որոյ վերջին
թնդանօթը գեռ չստեղծ, պա-
թեցաւ յանկարծ ներկայ Չինո-
երսպական պատերազմը, մարդ-
կային զեղին ցեղին բնդհարուած
ծերմակ ցեղին հետ:

20-րդ դարը պիտի ժառանգէ,
ինչպէս կերեւի, տեղեկական խառ-
նաշփոթութեան մը արհաւիրքը.
անտղութիւն մը ամեն կողմ: Այ-
նարհ յուզման մէջ է. Եւրոպա,
Ամերիկա, Ասիա պատերազմի դաշ-
տն են. կան խնդիրներ որք միմի-
ան զենքով լուծուելու կոչուած
են:

Բնդհանուր խաղաղութեան հա-
մար միջոցներ ամեն կողմ իրա-
րու կը յաջորդեն. այս եւ կին
պատերազմին տղաներէն զարհու-
րած ա՛յ խաղաղութիւն կը կոչեն.
Կայսր մը, յանուն մարդկութեան
զենքակեցութեան հրաւեր կ'կար-
գայ. մարդասէր հասարակագիր
ներ տեղեկական խաղաղութեան
թուական մը բանալու համար
լանքեր չին խնայիր. մարդկո-
տոր գործիքներու յօրինման սե-
փականացած միջոցներ այլ եւս
մարդկութեան երջանկութեանը
գործածելը կը պահանջեն:

Ինչպատ ընդհանուր խաղաղու-
թեան ա՛յ յաջորդ գործադր ու մար-
դասիրական շարժումներուն հան-
դէպ, ոչ մի դարու պատմութեան
մէջ անսնուած է այս վերջին վեց
տարուան ժամանակամիջոցին տե-
ղի ունեցած արիւնհեղութիւնը:

Արդի զենքերով մէկ միջոցէ աւե-
լի մարդկանց կոտորած մը, Այ-
նարհը եղաւ սպանդանոց մը:

Հայաստանէն նորէն մեզ կը հաս-
նին նոր շարքերու լուրեր. այլ և
այլ անտեղի պատճառներով նորէն
կը լեցուին թրքական բանտերը
անմեղ Հայերով:

Վեց տարիէ ի վեր այդ երկրին
հողը չաղախուցաւ հայ արեւմա-
բարբարոսութեան զենքին առջեւ
անխտիր ինկան ծեր, կին ու մա-
նուկ:

Ոչ մի գլխութեան ձեռք հա-
մարձակեցաւ այդ ոճրագործ ամ-
պարիշտին թեւը բռնել, Եթէ ներ-
կայ այս ողբալի վիճակը չարու-
նակուի մի քանի տարիներ, չեմ
գիտեր թէ՛ պիտի մնա՞յ արգ-
եօր հայ հողի վրայ հայ:

Մոլեռանդ մահմետականին ձեռ-
քը տուին անգամ մը հայը կոտո-
րելու զենքը, զայն ետ առնելի
Եթէ ոչ անկարելի, գէթ շատ
գժուար է. այսօր ամեն իսլամ
Հայաստանութեան մէջ իր պետին
չափ ազատ է:

Մեր այս ողբալի կացութեան
ո՛վ պիտի հասնի օգնութեան. տը-
խուր մտածում. Միայն մեր յոյ-
սն է Եւրոպայի քաղաքականու-
թիւնը. դատապարտուած ենք ա-
մեն ինչ սպասել, քաղաքական
դէպքերու ընթացքէն:

Արտասահմանի հայեր կրնան
կշռել հայութեան ներկայ վիճակը.
Եթէ այլ եւս մէկգի թողով կու-
սակցական խնդիրներ, ակնարկին
դարձնեն դէպի Հայաստան, պիտի
զգան թէ՛ ունին պարտականու-
թիւններ առ այն կատարելիք:

Չինաստանի հակաքրիստոնէա-
կան ու բարբարոսական շարժումը
ուրք հանեց համայն քաղաքակիրթ
աշխարհը: Դեռ պահին մը կեանքի
գին, կայսր մը բանակներ կը փո-
խադէ Դարյազոյն Արեւելք:

Ռնցիլոյն մէջ չտեսնուած, այս
առաջին անգամն է, որ ութը քա-
ղաքակիրթ ազգերու շանակներ,

մէկ զօրապետի մը հրամանատա-
րութեան ներքեւ, ի մի համախմ-
բուած բարբարոսութեան դէմ կը
զինուին, 11-րդ դարուն խաչակրու-
թեան նման, նոր թուական մէ-
ր այսօր մեր առջեւ կը բացուի:

Եթէ, իրօք, ինչպէս կրեւելի,
նոյնպէս Չինական խնդիրը խա-
ղաղ լուծման մը յանգի. եթէ ի
Չինաստան կեանքի ու ինչքի ա-
պահովութիւնը ա՛յ եւս երաշխա-
ւորուի, ու այդ լայնածաւալ երկ-
րին խորքերը անխտիր բացուին ար-
հեստագործութեան ու վաճառա-
կանութեան առջեւ, Եթէ ճ տէրու-
թիւններ, առանց մասնաւոր շա-
հատակութեան, այս քաղաքակր-
թական գործին անկեղծօրէն ծա-
ռային, մարդկութիւնը իրաւամբ
երախտապարտ պիտի մնայ իրենց:

Չինաստանի խնդրոյն խաղաղ
լուծումով, ու անդ հիմնական
բարեկարգութեան մը հաստատու-
մով, 400 միլիոնէ աւելի վայրի
նիւնքու քաղաքակրթութեան ուս-
պարէզ մը պիտի բացուի:

Ներկայ քաղաքական այս հան-
գամանքներ չարչարեալ հայ ազ-
գին յուսատու կը թուին. փր-
կութեան աղօտ լոյս մը կը ծնի
ամեն հայու սրտին մէջ:

Միհրան Աշոտ
Հանէա, 23 օգոս.

ՊՈԼՍՈՑ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ա.
Դեռ լուս չեմ գիտեր թէ ուղ-
ղա՞միտ և ուղղադատ անձ մը պի-
տի ուզէ՞ր թուրքոյ, մասնաւո-
րապէս Կ. Պոլսոյ մէջ լրագրի մը
հրատարակութեանը ձեռնարկել.
Վասն ինչ դժուարութիւններու
չի հանդիպիր լրագրագետ մը Կ.
Պոլսոյ մէջ. Նոյն՝ Պոլսոյ մէջ լր-
ագրի մը հրատարակելու արտօ-
նութիւն ստանալը, որ Պիտական
խորհրդոյ կողմէ թողարտուիլէ
փերջ Սուլթանին իրաւէտովը պէտք
է վաւերանայ, խիստ դժուար բան
է. պէտք է ազգեցիկ պաշտ-
պաններ գտնել, ու առնուապէս հա-
րիւր սփիի չափ ծախք ընել. Յե-
տոյ գրաքննութիւնը կայ. գրա-
քննութիւնը — աւելի ճիշդ պիտի
ըլլար ըսել գրափետութիւն — հարկ
է որ տեսնէ ազգային ու քաղա-

քական բոլոր յօդուածները. պէտք
է չլքէ անցնէ գաւառային թրք-
թակցութիւնները, այսինքն թեր-
թին ամբողջ պարունակութիւնը:

Պաշտական թերթերու խմբագիր
ները արտօնութիւն չունին նոյն
խակ մեր կրթական ու վարչական
հաստատութեանց մասին ընդար-
ձակ յօդուածներ հրատարակելու.
Պատրիարքարանի մէջ անիրաւու-
թիւններ ու զեղծումներ կը գոր-
ծուին եղեր, գաւառացի աղքատ-
ները հոն կը կեղեքեն եղեր, այս
առթիւ բառ միակ արտաբերելը
հայ խմբագրին բացարձակապէս ար-
գիլուած է:

Այսպէս Հայ-Հռոմէականներու
Տ. Աղարեան պատրիարքին յու-
ղարկուելութեանը առթիւ — ու-
րուն մեր Պատրիարքարանը ներ-
կայացուցիչ չէր ուղարկած — Բիւ-
ղանդիտի և «Մէճմուտի Ախպար»ի
միջեւ ծագած վիճաբանութիւնը
քիչ մնաց երկուքին համար ալ ող-
բերգական եղի մը պիտի յանգէր
ու «Ծաղիկ» օրութիւնը դա-
դարման դատապարտուեցաւ ճիշդ
անոր համար վասն իր կիրակնօրեայ
թիւը կարմրագոյն տառերով էր:

Երբ տպագրական Տեսչութեան
կողմէ թերթ մը դադարման դա-
տապարտուի, նորանոր ծախքեր
ընելու է վերստին արտօնութիւն
ստանալու համար. Հետեւապէս լը-
րագրողի պաշտօնը թուրքոյ մէջ
ամէն բանէ աւելի դժուար է միշտ.
արթուն ու չըմհայեաց ըլլալու
է: Որո՞ւ մտքէն կրնար անցնիլ,
օրինակի համար, թէ Սուրհան-
դակ օրագրոյ արտօնութիւնը պի-
տի զլացուէր, վասն ինչ Սուրհան-
դակ կրնայ եղեր հայերուն մտքին
մէջ սուրի գաղափարը արթնցնել,
Դիժազելու պէտք չկայ, ճշմար-
տութիւնն է օր կըսեմ. այս Սուր-
հանդակ լրագրին հրատարակու-
թիւնը տարի մը յետաձգուեցաւ
այս պատճառաւ, ու Արեւելք եւ
Բիւզանդիոն, որոնք ամեն օր այս
բառը կը գործածէին, տարի մը
զան վերցուցին իրենց իւնակե-
րուն մէջէն. կըսեն թէ Սուրհան-
դակ բառին մէջ սուրի գաղափարը
որոնող ապուշը, աւա՛ղ, դարձեալ
հայ մէկ եղեր և հայ խմբագիր մը:

Այս պայմաններու մէջ կը մը. տաժենք թէ բոլոր այս անպատեհ հոգեկանաց ու զգացարարական գիւտաբանական զգացարարական կամ օրա. գրաւորական բաւական յանգուզն ու ինքնավստահ ըլլալու է :

Սակայն հակառակ բոլոր ասանց Պոլսոյ մէջ հրատարակուող հայկ. բէն օրագիրներու ու պարբերական թերթերու թիւը միւս բոլոր օ. տար ազգերունը կը գլէ կ'անցնի :

Պահ մը 1896ին, գաղթական. ներու հոսանքէն ետք, Պոլսոյ լը. բազմաթիւ հրատարակչեր «Հայրենիք»-ի ու «Արեւելք»-ի խափոնում. ներէն վերջ թափուր մնաց, Արեւելքի ճարպիկ խմբագրապետը, Բիւզանդ Գէշեան յաջողեցաւ Բիւզանդիոնի հրատարակչու արտօ. նուիրենը ձեռք ձգել, շնորհիւ Նուրեան էֆ.ի ու պատրիարքական տեղապահին : Բիւզանդիոնէն վերջ սկսաւ հրատարակուիլ կարապետ իւթիւնեանի Մասիսը, իբր օրա. թերթ : Յետոյ Մասիսին յաջոր. դեց Զարեհ Եւսեփեանի «Արեւելք»ը, իրկու տարի ստալ «Ճէրիտէի Եւրոպէի»-ի արտօնատէրը Տիգրան Ճիւղէկեան յաջողեցաւ վերջ ի վերջոյ. Սուրհանդակը հրատարակելու : Սուրհանդակէ ետ. քն ալ Սարգիս Սաքաբանի-ի Ծաղիկ շաբաթաթերթը օրաթերթի վերածել տուաւ :

Գալով պարբերական հրատարա. կութեանց «Փունջ» շաբաթաթերթ թէն զատ, Ծաղիկ շաբաթաթերթը սկսաւ հրատարակուիլ Յովնան փառաշնանի խմբագրութեամբ ու յետոյ Մ. Սուլթանեանի ձեռ. ըով, նախ իբր գրական ու ման. կազմակերպութիւն, ու քիչ ետ. քը իբր գաւեշտաթերթ :

Վահան Վարդապետ Մինասեանի Լոյսը նախ հրատարակեցին Մ. Սուլթանեան ու Մ. Ուղուրեան իբր գրական կիսամսեայ հանդէս տարիի մը չափ, վերջը գաւեշտա. թերթի վերածուեցաւ :

Արմէն Լուսինեանի Հանրագի. տակը նախ Վ. Բողոտ սկսաւ հրատարակել իբր գրական ու պար. տիպանական շաբաթաթերթ : Բիւզանդ Պոզաճեան եւս ժամանակ մը զայն շարունակեց, վերջապէս Հ. Իւթիւնեանի «Բիւրսկն»-ը իբր բանասիրական ու տղագրական շաբաթաթերթ կը հրատարակէ Սմբատ Դաթեան : Գալով կարա. պետ իւթիւնեանի «Մասիս»-ին, պահ մը իբր փոքրածաւալ, յետոյ յայնածաւալ օրաթերթ հրատարա. կուելէ ետք Մ. Նամասեան փոխեց զայն կիսամսեայ վերածելով իբր գրական ու գեղարուեստական հան. դէս տարիի մը չափ հրատարա. կել ու վերջ ի վերջոյ Բիւզանդ Գէշեանի էնդրիկներուն տեղի տա. լով ստիպուեցաւ քաշուիլ հրապա. կէ :

Տիգրան Արփիարեան այժմ իբր գրական շաբաթաթերթ «Մասի. ս»-ը կը հրատարակէ :

Կայ նաեւ Նիւթ բանասիրական

ամսագիր, զոր Ուսումնական խոր հրգոյ ձրի կը թ. Տեսուչը Յովնան փառաշնան կը հրատարակէ :

Այս հրատարակութեանց վրայ մեր յառաջիկայ յօդուածին մէջ տելի մանրամասնօրէն խօսելու պիտի ջանանք :

Տ. Է.

ՍՈՒԼԹԱՆԻ Գ.Ա.ՀԱ.ԿԱԼՈՒԹԵԱՆ
ՉՅԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԸ

Սուլթանը Պէրլինի դաշնագրով Թուրքիայէն քրիստոնէից վիճա. կը բարձրացելու մասին պաշտօնա. պէս և երաշխաւորութեան ներքե. յանձն առած պարտքը չը կատա. ընց. և փոխանակ քրիստոնէական. ըուն. իր կայսրութեան ամենէն ա. լելի աշխատող. ընդունակ և շինիչ տարրին, գոհացում մը տալու, ա. նոնք տկարացնելու և ջնջելու յոռի և միեւնոյն ատեն կործանարար քաղաքականութեան հետեցաւ :

Սկիզբները Հայաստանի մէջ կեանքի, ինչքի, և պատուոյ դէմ գոր. ծուած խռովութիւնները, սկսան կա. նոնուարտապէս և անընդհատ տեղի ունենալ :

Եւրոպի ծրագրած քրիստոնէա. ջինջ քաղաքականութիւնը գլխա. եւորաբար կը վերաբերէր այն քը. իրատեսեայ տարրերու, որոց վի. ճակը միջազգային խնդիր եղած էր :

Հայերու վիճակը բարեփոխելու համար, հանդիսաւորապէս խօսք տուող կայսրը, Հայ ազգը հիմնօ. վին ջնջելու որոշումը տուաւ և գործադրել ալ սկսաւ :

Հայերու դէմ հալածանքները, մեծ թափով և Սիւրէմաքիքըման սկսան : Մէկ կողմէն Մայր Հայ. բնիքի մէջ ալլաճեաւ ու անլուր հալածանքները տեղի կուենային. Իսկ միւս կողմէն Հայութեան հին անցեալն ու փառքը յիշեցնող ա. մեն ինչ կ'անհետացուէին :

Գրաքննութիւն մ'ալ հաստատ. ուեցաւ օրուան մամուլին և հրա. տարակութեանց համար, Որոնց բացարձակապէս արգելուեցաւ հա. յութեան, Հայաստանի և հայուն ցաւերուն ու կրած տառապանքն. ըուն վրայ ու եւ է ակնարկութիւն մը և յիշատակութիւն մը ընել :

Թիւրքիայէն ամեն հասարա. կութեանց հրատարակութիւնները անխտիր կնիւթարկուեցան գրաքն. նութեան ճնշումին, սակայն իւրա. քանչիւրը կառավարութեան հան. դէպ ունեցած դիրքին համեմատա. թեամբ :

Հայաբնակ գաւառներու վիճակը ամեն կերպով ծանրացած էր, երբ Մուսա պէյի ծանօթ խնդիրն ալ եկաւ որոշապէս պարզել Սուլթա. նին դէպի իր հայ հպատակները ունեցած զգացումը :

Մուսա քիւրտ ցեղապետ մ'էր, հանրածանօթ իր բազմաթիւ ո. ճիրներովը : Հայերը պաշտօնապէս բողոքեցին այդ վայրագ աւազա. կին դէմ, մանաւանդ որ վերջերն ալ Հայ քահանայի աղջիկը

առեւանգած և բռնադատուած էր իր հարէմին մէջ :

Այս դէպքերը Հայաստանի մէջ գտնուող Եւրոպացի հիւպատոսնե. ին ալ իրենց կառավարութեան տե. զեկագրած ըլլալուն, կառավարու. թիւնը եռեւայթնեւր փրկելու եւ ինքզինքը ազատելու համար նկա. տի առաւ Հայերու բողոքը և Մու. սա պէյի իր տեսակին մէջ աննը. ման, հաւաքաւոր գաղափարներ տեղի ունեցաւ :

Աւելորդ է հիմա հոս միաւրի թուել այդ գաղափարութեան ծի. ծաղիլի կողմերը, հաստատուելու հա. մար թէ անիկա ստոր խաղ մըն էր հայերու զլխին, Սուլթանի կառավարութեան կողմէ : Ու շատ երկար է թուել այն ամեն տառա. պանքները, որոնց ենթարկուեցան գաղափարը և զկայ հայերը Պոլ. սոյ մէջ, բաւ է միայն ըսել որ Մուսայ Պէյ անպարտ արձակուե. ցաւ :

Դարեւոր ժողովուրդի մը իրաւունք. քին այլաբան յայտնի բռնարա. լումը, ալ բնական էր որ ամեն յարաբերութիւն սահմանէն դուրս պիտի հանէր և եղած որդարացի բողոքը գործնական հանգամանք մը կը ստանար : Ժողովուրդին համար միայն այդ միջոցը կը մնար իր ծանր վիճակէն փրը. կուելու համար և բնական ու անխու. սափելի հարկը, ինչպէս ժամա. նակին եղած էր, Հիլլեններու, Ռու. մէններու, Պալկարներու, Սիւր. պիւրաւ և այլոց :

Այդ գործնական բողոքները յա. ջորաբար տեղի ունեցան թէ հա. յաբնակ գաղափարներ և թէ մայ. յաքաղաքին մէջ : Սուլթանը այդ շարժումներուն հանդէպ խըս. տասիրտ գտնուեցաւ, ինչպէս որ խուլ մնացած էր լացերու և աղա. ջանքերու ատեն :

Գտնուեցան Թուրք նախարար. ներ, որոնք Սուլթանի քաղաքա. կանութեան սխալ մը ըլլալը ճանչ. նալով, խորհուրդ տուին գահացում տալ հայերուն և վիճակին բարե. փոխել, ինչպէս որ ալ արդէն կը պահանջէր երկրին շահը : Սակայն յիշվածնը այդ նախաբաններուն մտիկ չընելէ զատ, պաշտօնանկ ալ ըրաւ գտնելու և իր կայսերական հրամանով քաղաք միլիոնէ աւելի հայեր անօրինակ խռովութիւնն. ըով ջարդել տալէ, տասնեակ հա. զարներով տղաք որբացնելէ ետք մնացած հայերն ալ նիւթական ան հաշուելի կորուստներու մատենց :

Այս ամենքը տեղի ունեցաւ զօր. քերու և Թուրք տարրին շնորհիւ, որոնց հայերը տէրութեան և կը. թոնքի թշնամի «կեալութեան» ցոյց տալով, պայրագութիւնն ու մո. լեռանգութիւնը գրգռեց Հայոց դէմ :

Սակայն այս հարուածներով մի. այն հայերը չկորսնցուցին, Միւ. նոյն ժամանակ տէրութեան ալ տեղի նստաւ : Այս դէպքերով ե. լեռանգան կացութիւնը, որ արդէն հաւատարակչութիւնը կորուսած էր, ալ աւելի փնտաւեցաւ : Զար. դերու ատեն փնտաւող օտարահը. պատակներու կրած փնտաւն կառա. վարութիւնը պատասխանատու բըռ. նուելով, տուգանքներ պահանջուե. ցան, և աւելին է Եւրոպական պե. տութիւններէ ոմանք օգտուելով այդ առիթէն Արեւելեան խնդրը

բանալու սպառնալիքով երկրին մէջ տնտեսական մեծամեծ շահեր եւ նշանակելի մեծաշնորհներ ձեռք. անցուցին : Թուրքիոյ ձայնը Պե. տական մեծ շրջանակներու մէջ հ. զրնակաւոր ըլլալէ դադարեցաւ :

Սուլթանի կառավարութիւնը իր ձախող քաղաքականութեան իբր հետեւանք կրելիք փնտաւներուն մէկ մասն էր տակաւին որ ունեցաւ երկրին տնտեսական շահերէն կա. թեւոր մասեր օտարներուն ձեռքը անցնելով :

Պոռին

(Շարունակելի)

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՆԱԽԱԿ

Սուլթանի գիւղէն մասնաւորի ե. կած նախակէ մը հետեւեալը կը քաղինք :

«Սիրելի որդեակ :

«Քեզի զրկած այս նստակա կը կարծիք որ ալ վերջինը պիտի ըլ. լայ, որովհետեւ մեր գիւղի վի. ճակը անկարագրելի կերպով գէշ է. մանաւանդ այս օրերս ամենքս անօթի ծարաւ և զրեթէ մերկ վիճակի մէջ վայրկեանէ վայր կեան մահուան կրապոսենք :

«Աղքատութիւնն ու թշուառու. թիւնը ծայր աստիճանին հասած են. ցորենի մէկ շափը մինչեւ 20 զուրուշ բարձրացաւ. գիւղացիին մէկ մասը մուրալով հագիւ թէ պա. տաւ մը հաց կը գտնէ. բայց ե.

կուր տես որ քիչ ժամանակէն այն ալ անկարելի պիտի դառնայ. կա. ռավարութեան հարկահաւաքները գիւղը լեցուած, մինչեւ իսկ վր. րանիս գտնուած քուրջերը բռնի կ'առնեն 5 տարուան տուրքերու փոխարէն : Գիւղին մէջ ամենուն ունեցածը ձեռքէ գնաց. մէկ մա. սա ֆիւրտերը յափշտակեցին յայտ. նապէս, իսկ մնացեալն ալ կտաւ. վարութեան հարկահաւաքները կը վերցնեն : Գիւղիս հարուստ «օճա. խի» տէր մարդոց գաւառները ոտ. քերին բոպիկ, գլուխին բաց առ գին անդին հաց կը մուրան : Այս նստակա թուականէն երեք օր առաջ ալ մեր պատուական գիւղա. պետը Գրիգոր Պոյաճեան, որ գիւղիս նեղ օրերուն միշտ կնցած և ձեռքէն եկած ծառայութիւնն ու բարիքը ըրած էր մեր աղքատ. ներուն, իրիկուան ժամը 5ի մի.

Չոցները կ'ոչեանենց դրանք առ. ջիւր քիւրտերէն շարաշար սպան. նուեցաւ. պատճառը որ հարցու. նես, այդ գաղափարներու գիւղը նո. բէն թալանի տալ ուղեւն ու Պո. յաճեանի արգելք ըլլալն էր :

«Ահա սիրելի որդեակ, մեր վի. ճակը այս է. կազաչեմ որ մեզ չը. մոռնաս. հող ըսէ մեր գիւղաց. ւոց որ փութով օգնեն իրենց տը. ներուն. իսկ եթէ այդ ալ կարելի չէ Զեր պանգուխտ վիճակին մէջ, այն ատեն սրտանց աղօթեցէք Ա. տուժոյ որ ժամ առաջ առնէ մեր հոգին. սեռնինք ու ազատիք ա. նօթութիւնէ, մերկութենէ և այլ գաղափարներ ձեռքէն :»

Հայրդ

